

## ԹԵՍԱ 3.ԳԱՅԼԻԿՈՆՍԱՆ ԵՎ ՆԵՐՏԱՇՄԱՆ ՀԱՍՏՈՑՆԵՐ

Էջ

|               |                                                                                                                                                       |           |
|---------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------|
| <b>3.1.</b>   | <b>Գայլիկոնման հաստոցների տեսակները</b><br><b>(առանձնահատկությունները, մշակման սխեմաները,<br/>օգտագործվող կտրող գործիքները և հարմարանքները) .....</b> | <b>1</b>  |
| <b>3.1.1.</b> | <b>2A135 մակնիշի ուղղահայաց գայլիկոնման հաստոց .....</b>                                                                                              | <b>3</b>  |
| <b>3.1.2.</b> | <b>2B56 մակնիշի շառավղազայլիկոնման հաստոց .....</b>                                                                                                   | <b>8</b>  |
| <b>3.2.</b>   | <b>Ներտաշման հաստոցներ .....</b>                                                                                                                      | <b>14</b> |
| <b>3.2.1</b>  | <b>262Г մակնիշի հորիզոնական ներտաշման հաստոց ...</b>                                                                                                  | <b>15</b> |
| <b>3.3.</b>   | <b>Ինքնաստուգման հարցաշար .....</b>                                                                                                                   | <b>22</b> |

### **3.1. Գայլիկոնման հաստոցների տեսակները**

**(առանձնահատկությունները, մշակման սխեմաները,  
օգտագործվող կտրող գործիքները և հարմարանքները)**

Գայլիկոնման հաստոցները նախատեսված են հոծ մարմնի մեջ անցքերի գայլիկոնման, անցքալայնման, անցքակոկման և ներտաշման, ինչպես նաև ներպարուրակիչներով ներքին պարուրակների մշակման համար:

Արդյունաբերության տարրեր ճյուղերում ավելի մեծ կիրառություն են ստացել հետևյալ տիպի գայլիկոնման հաստոցները:

1) Մեկ իլանի ուղղահայաց գայլիկոնման հաստոցներ՝

ա) սեղանի գայլիկոնման հաստոցներ, որոնք նախատեսված են փոքր տրամագծի անցքերի մշակման համար: Այս հաստոցները լայն կիրառություն են գտնել սարքաշինության մեջ:

Գայլիկոնման հաստոցները նախատեսված են հոծ մարմնի մեջ անցքերի գայլիկոնման, անցքալայնման, անցքակոկման և ներտաշման, ինչպես նաև ներպարուրակիչներով ներքին պարուրակների մշակման համար:

բ) ուղղահայաց գայլիկոնման հաստոց սյան վրա (հիմնական և ավելի

---

---

տարածված տեսակ): Կիրառվում է առավելապես համեմատաբար ոչ մեծ շափերով դետալներում անցքերի մշակման համար: Դրանց թերությունն այն է, որ գայլիկոնի և անցքի առանցքների համատեղման համար անհրաժեշտ է կատարել դետալի տեղափոխություն:

2) Ծառավղա-գայլիկոնման հաստոցներ, որոնք օգտագործվում են մեծ դետալների մեջ անցքերի գայլիկոնման համար, չունեն ուղղահայաց գայլիկոնման հաստոցների՝ վերը նշված թերությունը: Ծառավղա-գայլիկոնման հաստոցի վրա գայլիկոնի և անցքի առանցքների համատեղման համար հարմար է կատարել հաստոցի իլի տեղափոխությունը անշարժ դետալի նկատմամբ:

3) Բազմաթիվ գայլիկոնման հաստոցներ, որոնք, մեկ իլանի հաստոցների համեմատ, ապահովում են ավելի բարձր արտադրողականություն:

4) Հորիզոնական գայլիկոնման հաստոցներ խոր անցքերի մշակման համար:

5) Կենտրոնահան հաստոցներ, որոնք նախատեսված են նախապատրաստվածքների ճակատային մասերում կենտրոնավորման անցքերի մշակման համար:

Անցքերի մշակման հաստոցների խմբին են պատկանում նաև ներտաշման հաստոցները: Այդ ենթախմբի հաստոցների մեջ են մտնում.

1) Հորիզոնական ներտաշման հաստոցներ, որոնք նախատեսված են մեծ նախապատրաստվածքների մեջ նախապես մշակված կամ ծովումից ստացված անցքերի ներտաշման համար:

2) Կոռորդինատային ներտաշման հաստոցներ, որոնք նախատեսված են ճշգրիտ անցքերի մշակման համար, ապահովելով դրանց միջառանցքային հեռավորության բարձր ճշտություն: Կոռորդինատային ներտաշման հաստոցների առանձնահատկությունն այն է, որ դրանք ունեն հատուկ սարքավորումներ, որոնք ապահովում են հաստոցի շարժվող հանգույցների տեղաշարժի ճշգրիտ չափում:

3) Ալմաստային ներտաշման հաստոցներ, գունավոր մետաղներից դետալների մեջ ալմաստե կամ կարծր համաձուլվածքե գործիքներով անցքերի մաքրատաշ ներտաշման համար: Հաստոցն օժտված է իլի բարձր պտուտաթվերով և կոշտությամբ, որի արդյունքում ապահովում է նրա թրթուակայունությունը:

### **3.1.1. 2A135 մակնիշի ուղղահայց գայլիկոնման հաստոց**

2A135 մակնիշի ուղղահայց գայլիկոնման հաստոցի վրա մշակվում են համեմատաբար փոքր չափերի նախապատրաստվածքներ:

Հաստոցի հիմնական հանգույցները բերված են նկ. 3.1-ում.

Հաստոցի դեկավարման օրգաններն են.

1 - սեղանի տեղափոխման բռնակ, 2 - իլի բարձրացման - իջեցման և մեխանիկական մատուցման միացման դեկանիվ:

**Հարժումները հաստոցում:** Իլի պսույտը գործիքի հետ միասին կտրման շարժումն է: Իլի առանցքային տեղաշարժը գործիքի հետ միասին մատուցման շարժումն է: *Օժանդակ շարժումներն են՝ սեղանի և իլի կոճղի տեղափոխությունը ուղղաձիգով կամ իլի առանցքով նրա արագ տեղափոխությունը՝ ձեռքով:*


**Աշխատանքի սկզբունքը:** Նախապատրաստվածքը տեղակայվում է սեղանի վրա և ամրացվում մեքենայական մամլակի կամ հատուկ հարմարանքների մեջ: Մշակվող անցքի և իլի առանցքների համատեղումն իրականացվում է հարմարանքի՝ նախապատրաստվածքի հետ միասին տեղափոխման՝ հաստոցի սեղանի վրայով:

Կտրող գործիքը, կախված պոշամասի բնույթից, ամրացվում է հաստոցի իլի մեջ կամ անցումային վուանների, կամ կապիչի օգնությամբ: Կախված մշակվող նախապատրաստվածքի բարձրությունից՝ իլի կոճղը դիրքափորվում է հաստոցի սեղանի նկատմամբ:

Անցքի մշակումը կատարվում է իլի ձեռքով տեղափոխման կամ մեխանիկական մատուցման միջոցով:

**Կառուցվածքայիմ առանձնահատկությունները:** 2A135 մակնիշի գայլիկոնման հաստոցն օժտված է բարձր կոշտությամբ, աշխատանքային մեխանիզմների ամրությամբ, շարժաբերի հզորությամբ և կտրման արագությունների և մատուցումների լայն տիրույթով, որը թույլ է տալիս օգտագործել կարծր համածուլվածքից պատրաստված գործիքներ: Ավտոմատ կերպով կամ ձեռքով դեկավարվող էլեկտրադիչի առկայությունն ապահովում է պարուրակի մշակումը ներպարուրակիչով՝ ձեռքով մոտեցման և հեռացման միջոցով:

2A135 մակնիշի գայլիկոնման հաստոցի կառուցվածքում նախատեսված է կտրող գործիքը նախապատրաստվածքին մոտեցնելուց հետո մատուցման շարժման ավտոնատ միացում, իսկ անհրաժեշտ գայլիկոնման խորություն ստանալուց հետո՝ մատուցման ավտոնատ անշատում:



Նկ. 3.1.2A135 մակնիշի ուղղահայաց գայլիկոնման հաստոցի ընդհանուր տեսքը

Խոլ անցքերի մշակման ժամանակ պահանջվող խորությունն ապահովում է կանգառի հատուկ մեխանիզմով: Այդ մեխանիզմը, միաժամա-

---

---

նակ, ապահովիչ սարք է, որը մատուցման մեխանիզմը գերբեռնվածությունների ժամանակ պահպանում է կոտրվելուց:

Այս հաստոցներում նախատեսված է շարժաբերային փոկանիվների փոփոխման հնարավորություն, որով կարելի է հաստատել իլի պտուտաթվերը՝ ըստ տեխնոլոգիական խնդիրների:

### Հաստոցի կինեմատիկան

**Գլխավոր շարժման կինեմատիկ շղթան:** Հաստոցում տեղադրված 4,5 կՎտ հզորությամբ էլեկտրաշարժիչից սեպաֆոլային (140 - 178) փոխանցմամբ շարժումն արագության տուփի միջոցով հաղորդվում է V իլին (նկ. 3.2):

Արագության տուփի I լիսենի վրա նստեցված է  $B_1$  եռարլոկ ատամնանիվը, որն ապահովում է II լիսենի 3 տարրեր պտտման արագությունները: II լիսենից 34 և 48 անիվների միջոցով շարժումը հաղորդվում է III լիսենին, որի վրա նստեցված  $B_2$  եռարլոկ ատամնանվով պտույտները փոխանցվում են IV լիսենին, որն էլ բազմաերիթով կապված է հաստոցի V իլին:

Իլի առավելագույն պտուտաթվերը որոշվում են հետևյալ հավասարումով.

$$n_{\min} = 1440 \frac{140}{178} \cdot 0,985 \cdot \frac{21}{61} \cdot \frac{34}{48} \cdot \frac{17}{68} = 68 \text{ մմ/պտ:} \quad (3.1)$$

$$n_{\max} = 1440 \cdot \frac{140}{178} \cdot 0,985 \cdot \frac{34}{48} \cdot \frac{34}{48} \cdot \frac{65}{34} = 1070 \text{ մմ/պտ:} \quad (3.2)$$

**Մատուցման շարժում:** Մատուցման շարժումը վերցվում է V իլից: Շարժումը  $\frac{27}{50}$  և  $\frac{27}{50}$  անիվների միջոցով փոխանցվում է շարժական երիթներով մեխանիզմով օժտված մատուցումների տուփին,  $M_1$  ապահովիչ կցորդիչին, IX լիսենին,  $\frac{1}{47}$  որդնակային փոխանցմանը, ճակատային ատամնավոր


$M_2$  կցորդիչին, X լիսենին և իլի պարկումի ատամնաձողային փոխանցմանը:

VI լիսենից երեք արագությունների պտույտները հաղորդվում են VII լիսենին, որի վրա կոշտ ամրացված են 60, 56, 51, 35 և 21 անիվները:

VII լիսենից պտույտները հաղորդվում են VIII լիսենին՝ թվով չորս արագություններով:

Տեսականորեն մատուցումների տուփն ապահովում է պտտման 12 արագություն, սակայն, դրանցից մեկը կրկնվում է, այդ պատճառով 2A135 մակնիշի հաստոցի մատուցման արագությունների թիվը 11 է: VIII լիսենից

բոնցրային կցորդիչի միջոցով շարժումը հաղորդվում է IX լիստին, որի  
վրա ամրացված է որդնակը: 47 որդնակային անիվը տեղակայված է նոյն



Նկ. 3.2. 2A135 մակնիշի ուղղահայաց գայլիկոնման հաստոցի կիմեմատիկ սխեման

լիսեոի վրա՝ 14 ատամնաձողային անվի հետ միասին, որը կառչման մեջ է գտնվում իլի պարկուճի մեջ մշակված ատամնաձողի հետ:

$M_1$  կցորդիչը նախատեսված է ծանրաբեռնվածությունների մեծացման դեպքում մատուցման մեխանիզմը կոտրվելուց պաշտպանելու, ինչպես նաև մատուցման ավտոմատ անջատման համար:


Ատամնան առավելագույն արժեքը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$s_{\max} = 1 \cdot \frac{27}{50} \cdot \frac{27}{50} \cdot \frac{30}{51} \cdot \frac{60}{21} \cdot \frac{1}{47} \cdot 3,14 \cdot 3,5 \cdot 14 = 1,6 \text{ մմ/պուտ:} \quad (3.3)$$

**Օժանդակ շարժումները:** Իլի կոճղի տեղափոխությունն իրականացվում է  $P_1$  բռնակի,  $\frac{1}{32}$  որդնակային փոխանցման և 18 ձողային անվի միջոցով, որը կառչման մեջ է հաստոցի կոճղի վրա ամրացված  $m = 2$  մմ ատամնաձողի հետ: Սեղանի ուղղահայց տեղաշարժն իրականացվում է  $P_2$  բռնակի պտտմամբ, XI լիսեոի,  $\frac{16}{43}$  կոճական անիվների և ընթացային պտուտակի միջոցով:

### Հաստոցի վրա կիրկող հարմաքները

Գայիկոննան հաստոցի իլի մեջ գործիքի ամրացման համար օգտագործվում են տարրեր տեսակի հարմաքանքներ, որոնք կոչվում են օժանդակ



- Նկ.3.3. Անցումային վասներ  
 ա) փոքր տրամագծի կոճական պոշամասով  
     գործիքների համար,  
 բ) մեծ տրամագծի կոճական պոշամասով  
     գործիքների համար,  
 գ) կոճական գլանական պոշամասով  
     գործիքների համար

---

---

գործիքներ՝ վրաններ, կապիչներ, կալակներ և այլն:

Վրաններն օգտագործվում են այն դեպքում, երբ առանցքային գործիքի պոշանասի շափերը չեն համապատասխանում հաստոցի իջի նստեցվող մասի կոնական անցքի շափերին: Անցումային վրանները (նկ. 3.3) ապահովում են կոնական և գլանական պոշամասերով գործիքների ամրացումը կոնական անցքի մեջ: Կապիչները հետարարություն են տալիս ամրացնել գլանական պոշամասով գործիքները կամ գլանական վրանները, որոնց մեջ տեղադրված են գործիքները:

Կալակներն օգտագործվում են տարրեր տեսակի հասուլ գործիքների տեղակայման, ինչպես նաև հատուկ այլ նպատակների համար, ասենք, երբ մշակման անհրաժեշտությունից ելնելով անհրաժեշտ է երկարացնել գործիքը: Գայլիկոնման հաստոցի վրա օգտագործվող հարմարանքները նախատեսված են մշակվող նախապատրաստվածքների ամրացման համար: Ըստ նշանակության հարմարանքները լինում են՝ համապիտանի և հատուկ, ըստ կառուցվածքի և արտադրության՝ նորմալ և հատուկ կառուցվածքով: Մերիական արտադրության մեջ անցքերի մշակման համար օգտագործվում են կոնդուկտորներ:


### **3.1.2. 2B56 մակնիշի շառավղազայիկոնման հաստոց**

Հաստոցը նախատեսված է խոշոր շափեր և մեծ կշիռ ունեցող նախապատրաստվածքների մեջ անցքերի գայլիկոնման, անցքալայնման, անցքակոկման, ինչպես նաև պարուրակների մշակման համար՝ հատային և անհատական արտադրության պայմաններում:

Հաստոցն ունի բարձր կոշտություն, գլխավոր շարժիչի բավարար հզորություն, ինչպես նաև իջի պտուտարվերի և մատուցման մեծ ընդգրկույթ, որը թույլ է տալիս աշխատել արդյունավետ կտրման ռեժիմներում:

Հաստոցի հիմնական հանգույցները բերված են նկ. 3.4-ում:

Հաստոցի դեկավարման օրգաններն են. 1 - մատուցումների տուփի փոխարկման բռնակ, 2 - իջի ձեռքով արագ տեղաշարժման և ավտոմատ մատուցման միացման բռնակ, 3 - մատուցման ավտոմատ անշատման տեղակայման բռնակ, 4 - ձեռքով իջի դանդաղ տեղաշարժման բռնիչ, 5 - ձեռքով իջի կոճղի շառավղային տեղաշարժման բռնիչ, 6 - արագությունների տուփի փոխարկման բռնակ, 7 - գլխավոր էլեկտրաշարժիչի միացման, անջատման և դարձման բռնակ:



Նկ. 3.4. 2B56 մակնիշի շառափղային գայլիկոնման հաստոցի ընդհանուր տեսքը  
Ա-հաստոցի հիմնատակ, Բ-անշարժ հենասյուն, Գ-պտտվող հենասյան ամրացման  
մեխանիզմ, Դ-պտտվող սնամեջ հենասյուն, Ե-լայնակի բարձրացման, իջեցման  
և ամրացման մեխանիզմ, Զ-լայնակ, Շ-արագության և ճատուցման տուփերով իլի կոճի,  
Ը-դնուի սեղան

**Չարժումները հաստոցում:** Կորման շարժումը իլի պտույտն է: Մաս-  
տուցման շարժումը իլի՝ առանցքային ուղղաձիգ տեղափոխությունն է:  
**Օժանդակ շարժումներն են.** տրավերսի վրայով ձեռքով իլի կոճի հորիզո-

---

---

նական տեղափոխությունը, տրավերսի մեխանիկական տեղափոխությունը ուղղահայաց ուղղությամբ պտտվող սյան վրայով և նրա վրա տրավերսի ամրացումը, սյան հետ տրավերսի՝ ձեռքով պտույտը և պտտվող սյան մեխանիկական ամրացումը:

**Աշխատանքի սկզբունքը:** Նախապատրաստվածքը տեղակայվում է Ահյմքի կամ Ը դնուվի սեղանի վրա: Կտրող գործիքն ամրացվում է հաստոցի իլի մեջ: Գործիքի առանցքի և մշակվելիք անցքի առանցքների համատեղման համար անհրաժեշտ է ձեռքի միջոցով է իլի կոճղը Զ տրավերսի ուղղորդների վրայով տեղափոխել, որն իր հերթին կարող է պտտվել սնամեջ Դ սյան հետ: Տրավերսի տեղակայումն ըստ բարձրության, կախված մշակվող նախապատրաստվածքի չափերից, ապահովվում է՝ տրավերսը տեղափոխելու պտտվող սյան նկատմամբ:

Խոլու անցքերի մշակման համար հաստոցն ունի մատուցման ավտոմատ կանգառի մեխանիզմ:

**Կառուցվածքային առանձնահատկությունները:** Իլի պտուտաքվերի և մատուցումների փոփոխումն ապահովվում է արագությունների և մատուցումների տուփերի միջոցով՝ մեկ բռնակի դեկավարմանը: Հաստոցի մատուցման մեխանիզմը ավտոմատ անջատվում է, եթե մշակվող անցքը հասնում է պահանջվող խորության:

Տրավերսի բարձրացումն ու իջեցումը իրականացվում է առանձին էլեկտրաշարժիչի միջոցով, շարժման մեջ դմեռով այդ նպատակի համար տրավերսի մեջ տեղակայված հատուկ մեխանիզմը: Տրավերսի սեղմումը պտտվող սնամեջ սյան վրա կատարվում է ավտոմատ կերպով՝ նրա բարձրացման կամ իջեցման ավարտից անմիջապես հետո:


## **Հաստոցի կիմենատիկան**

### **Գլխավոր շարժման կիմենատիկ շղթան:**

Հաստոցում տեղադրված 5,5 կՎտ հզորությամբ Շ1 էլեկտրաշարժիչից

կիսակոշտ կցորդիչի,  $\frac{31}{49}$  զլանական անիվների և արագությունների տուփի միջոցով շարժման մեջ է դրվում VII իլը (նկ. 3.5): Արագությունների տուփում տեղադրված են շարժական  $B_1$  եռաբլոկը, փոփոխվող A-B անիվները և երկու շարժական  $B_2$  և  $B_3$  երկրող անիվները: Ինչպես երևում է արագությունների գրաֆիկից, արագությունների տուփն ապահովվում է պտտման 10 տարբեր արագություններ, ընդ որում՝ դրանցից երկուսը համընկնում

**ԵԱ:** Սովորաբար հաստոցն ունենում է երկու փոփոխվող անիվներ՝  $A = 40$  և  $B = 33$ , որոնց տեղերը կարելի է փոխել: Իլի առավելագույն պտուտարվերը կարելի է հաշվել՝



Նկ. 3.5. 2B56 մակնիշի շատափային գայլիկոննան հաստոցի կինհնատի սինթենսի

$$n_{\min} = 1440 \cdot \frac{31}{49} \cdot \frac{23}{57} \cdot \frac{A}{B} \cdot \frac{22}{48} \cdot \frac{27}{43} = 125 \text{ լուսկ}^{-1}; \quad (3.4)$$

$$n_{\max} = 1440 \cdot \frac{31}{49} \cdot \frac{40}{40} \cdot \left( \frac{A}{B} \right) \cdot \frac{40}{33} \cdot \frac{34}{36} \cdot \frac{43}{27} = 1660 \text{ լուսկ}^{-1}; \quad (3.5)$$

**Մատուցման շարժում:** Մատուցման շարժումը վերցվում է VI սնամեջ լիսեռից, որը բազմաերիթով միացված է VII իլին և  $\frac{31}{41}$  անիվների միջոցով շարժումը փոխանցում է թվով 9 տարբեր արագույթուններ ունեցող մատուցմաների տուփին,  $\frac{22}{55}$  անիվներին, XI լիսեռին,  $\frac{1}{60}$  որդնակային փոխանցմանը, 13 ատամնաձողային անվին, որն ամրացված է սնամեջ XII լիսեռին և կառչման մեջ է իլի պարկուճի մեջ գտնվող  $m = 2$  մմ ատամնաձողի հետ:

Մատուցումների տուփում գտնվում են երկու շարժական  $B_4$  և  $B_5$  եռաբլուկները: Գրաֆիկով տրված է մատուցումների տուփի կառուցվածքը:

Իլի փոքրագույն մատուցումը կարելի է հաշվել հետևյալ բանաձևով.

$$s_{\min} = 1 \cdot \frac{31}{41} \cdot \frac{19}{35} \cdot \frac{18}{40} \cdot \frac{22}{55} \cdot \frac{1}{60} \cdot 3,14 \cdot 3 \cdot 13 = 0,15 \text{ մմ/պտ:} \quad (3.6)$$

Սեխանիկական մատուցման միացումն ու անջատումը կատարվում են  $M_2$  շփական կցորդիչի միջոցով, որը ղեկավարվում է  $P$  բռնակով: Բռնակը դեպի մեզ տեղափոխելիս շփական  $M_2$  կցորդիչը կառչվում է 60 որդնակային անվին՝ XII սնամեջ լիսեռին, միացնելով մեխանիկական մատուցումը:

**Օժանդակ շարժումներ:**  $P$  բռնակը մեզնից հեռացնելիս  $M_2$  կցորդիչն անջատվում է: Այդ դեպքում XII սնամեջ լիսեռի առանցքի նկատմամբ  $P$  բռնակի պտտման շնորհիվ կարելի է ձեռքով կատարել իլի արագ տեղափոխություն:

Ձեռքի միջոցով իլի ճշգրիտ տեղափոխությունը կատարվում է  $M_x$  քաֆանվի միջոցով, որը ամրացված է XIII լիսեռին,  $M_1$  կցորդիչի միացման և մատուցման տուփի  $B_5$  շարժական եռաբլուկի չեզոք դիրքի դեպքում: Տրավերսի ուղղորդների վրայով իլի կոճղի տեղափոխությունն իրականացվում է  $M_{x1}$  բռնակի միջոցով, որը ամրացված է XIV լիսեռին: Այն անցնում է համառանցք տեղակայված XII և XIII սնամեջ լիսեռների միջով: XIV լիսեռի մյուս ծայրին տեղակայված է 13 ձողաճիվը, որը կառչման մեջ է գտնվում տրավերսի վրա ամրացված  $m = 2$  մմ ատամնաձողի հետ:

---

Տրավերսի ուղղաձիգ տեղափոխությունը և ձգումը սնամեջ պտտվող սյան վրա իրականացվում է 1,3 կՎտ հզրությամբ Շ2 էլեկտրաշարժիչի միջոցով: Էլեկտրաշարժիչից  $\frac{23}{66}$  անիվներով, XV լիսեռով և  $\frac{16}{54}$  ատամնա-

նիվների միջոցով շարժման մեջ է դրվում XVI ուղղահայաց ընթացային պտուտակը: Պոտուտակի վրա են գտնվում երկու մանեկները, որոնք տեղակայված են տրավերսի մեջ: Դրանցից՝ վերին մանեկը՝ Մ1 բարձրացման մանեկ է, որն ազատ կարող է պտտվել XVI ընթացային պտուտակի հետ, բայց պտուտակի երկայնքով այն շարժվում է միայն տրավերսի հետ միասին: Բարձրացնող Մ1 մանեկի ներքին մասում կամ ատամներ, որոնցով նա կարող է միանալ Մ2 մանեկի ներքին ատամների հետ ( $Մ2$ -ը սեղմող մանեկն է): Այդ մանեկը չի կարող պտտվել ընթացային պտուտակի հետ, քանի որ այն կապված է տրավերսի հետուղղորդ Եր երթով: Ընթացային պտուտակի պտուման ժամանակ Մ2 մանեկը տեղափոխվում է իր առանցքի երկայնքով:

Սանեկի ներքին մասում արված է օղակաձև ակոս, որի մեջ նտնում է տրավերսի ձգման երկճյուղ բռնակը:

Ընթացային XVI պտուտակի պտուման ժամանակ սկզբում Մ1 մանեկն ազատ պտտվում է, իսկ Մ2 մանեկը՝ տեղափոխվում պտուտակի առանցքի երկայնքով՝ ազատելով տրավերսին սեղմող սարքը: Որոշակի տեղաշարժից հետո Մ2 սեղմող մանեկի ատամները կառչման մեջ են մտնում Մ1 բարձրացնող մանեկի ատամների հետ: Մ1 մանեկն այլևս չի կարող պտտվել ընթացային պտուտակի հետ, որի հետևանքով այն տեղաշարժվում է պտուտակի երկայնքով՝ բարձրացնելով կամ իջեցնելով տրավերսը, կախված էլեկտրաշարժիչի և ընթացային պտուտակի պտուման ուղղությունից:

Տրավերսն անհրաժեշտ չափով տեղափոխելուց հետո էլեկտրաշարժիչի սեղման կոճակը բաց են բողնում և, շնորհիվ համապատասխան էլեկտրական սխեմայի, էլեկտրաշարժիչն սկսում է պտտվել հակառակ ուղղությամբ: Դրա հետևանքով սեղման Մ2 մանեկը տեղափոխվում է հակառակ ուղղությամբ՝ դուրս գալով բարձրացնող Մ1 մանեկի կառչումից, և, հասնելով չեզոք դիրք, սեպում տրավերսին ձգող սարքը:


Սնամեջ պտտվող սյան ձգումն իրականացվում է 0,52 կՎտ հզրությամբ

Շ3 էլեկտրաշարժիչի օգնությամբ: Նրա պտույտով  $\frac{2}{60}$  որդնակային փո-

խանցման միջոցով շարժման մեջ է դրվում XVII պտուտակը, որը ձգում է անուրը՝ միացնելով պտտվող և անշարժ սյուները:

### 3.2 Ներտաշման հաստոցներ

Ներտաշման հաստոցներով կատարվում է անցքերի գայլիկոնում, վերապայլիկոնում, անցքալայնում, անցքերի ներտաշում և անցքակոկում, կտրիչներով ճակատատաշում, մակերևույթների և ակոսների ֆրեզերում, ներպա-



Նկ. 3.6. Հորիզոնական ներտաշման հաստոցի վրա կատարվող աշխատանքները

ա) գլանական անցքերի ներտաշում, բ) անցքերի գայլիկոնում, գ) ճակատային ֆրեզով ուղղահայաց մակերևույթի մշակում, դ) հորիզոնական հարք և ծեավոր մակերևույթի մշակում, ե) ճակատի մշակումը կտրիչով, գ) կտրիչով ներթի պարուրակի մշակումը

բուրակիչներով և կտրիչներով պարուրակների մշակում և այլն (նկ. 3.6):

Ներտաշման հաստոցները լինում՝ հորիզոնական, կոռորդինատային և ալմաստային:

Նախապատրաստվածքների նույր ալմաստային մշակման համար օգտագործվում են ալմաստային ներտաշման հաստոցներ, որոնք բույլ են

---

---

տալիս ներտաշել անցը՝ ապահովելով մշակված անցքի մակերևույթի ձևի գլանականությունից շեղվածություն՝ 3...5 մկմ սահմաններում:

Կոռդինատային ներտաշման հաստոցների վրա կատարվում է անցքերի ճշշտ մշակում այն դեպքում, երբ անհրաժեշտ է ապահովել մշակված անցքերի միջառանցքային ճշգրիտ հեռավորությունը կամ անցքերի առանցքների հեռավորությունը քազային մակերևույթներից (0,005...0,001 մմ սահմաններում):

### **3.2.1 262Г մակնիշի հորիզոնական ներտաշման հաստոց**

262Г մակնիշի հորիզոնական ներտաշման հաստոցը նախատեսված է իրար հետ փոխկապակցված ճշգրիտ անցքերի գայլիկոննան, ներտաշման, անցքալայննան և անցքակոլման, շառավղային ենթակրի միջոցով ճակատային մշակումների, հարքությունների ֆրեզերման և ներտաշման, իլի միջոցով պարուրակի մշակման համար՝ հատային և սերիական արտադրության պայմաններում:

Հաստոցի հիմնական հանգույցներն են (նկ. 3.7).


Ա - հետին կանգնակ, Բ - հենարանային առանցքակալով հենամահիկ, Գ - իլի կոճղը արագությունների տուփով և մատուցումների տուփով, Դ - առջևի կանգնակ, Ե - երկայնական սահուկներ, Զ- լայնական սահուկներ, Է - սեղան, Ը - հենց, Թ- շառավղային ենթակրի, Ժ - տափակակապիչ:

Հաստոցի դեկավարման օրգաններն են՝ 1 - կոճակային կայան, 2 - ձեռքով իլի, ենթակրի, տափակակապիչ, իլի կոճղի և սեղանի ճշգրիտ տեղաշարժման դարձանիվ, 3 - արագությունների տուփի դեկավարման բռնակ, 4 - իլի սեղման բռնակ, 5 - ձեռքով շառավղային ենթակրի տեղաշարժման բռնակ, 6 - ձեռքով իլի տեղաշարժման դեկանիվ, 7 - իլի կոճղի և սեղանի մեխանիկական մատուցման միացման բռնակ, 8 - ձեռքով սեղանի լայնակի տեղաշարժման բռնակ, 9 - ձեռքով սեղանի երկայնակի տեղաշարժման բռնակ:

**Հարժումները հաստոցում:** Իլի կամ իլի և տափակակապիչի պտույտը կտրման շարժումներն են : Իլի առանցքային տեղաշարժը, սեղանի երկայնակի տեղաշարժը, սեղանի լայնակի տեղաշարժը, իլի կոճղի՝ ուղղաձիգով տեղաշարժը և տափակակապիչի ենթակրի շառավղային տեղաշարժը՝ մատուցման շարժումներն են:

**Օժանդակ շարժումներն են՝** երկայնակի ուղղությամբ հետին կանգնակի տեղաշարժը, սեղանի, իլի կոճղի և իլի արագ տեղաշարժը, իլի կոճղի՝ սեղանի, իլի, շառավղային ենթակրի և հենարանային հենամահիկի ճշգրիտ

տեղակայման տեղաշարժի: Կտրիչով ներքին պարուրակի մշակման



Ա-հանդիսացնակ, Բ-հնմուրամային ռասմբլայզը հնմանահիկ,  
Գ-իի լուծու պարագումների և մասուցումների տոփերու,  
Դ-ացքի կանգնակ, Ե-երկարացնաման սամուկըն,  
Զ-սեղու, Շ-հելմին,  
Թ-շամպակային ներքանիք, Ժ-տակականակայչ

Կի.3.7.262Г ճականիչի խրկումական մերտաշման հաստոցի ընթամոր տեսքը

---

Ժամանակ ներտաշ իլի համընթաց շարժումը կոչվում է փոխապակցված շարժում:

**Աշխատանքի սկզբունքը:** Մշակվող նախապատրաստվածքն ամրացվում է անմիջապես հաստոցի սեղանին կամ համապատասխան հարմարանքում: Կտրող գործիքները տեղակայվում են իլի մեջ, ամրացվում տափակապիչին կամ շառավղային ենթակրին:

Կարճ անցքերի ներտաշման ժամանակ մատուցումը հաղորդվում է իլին: Երկար և համառանցք անցքերի մշակման ժամանակ մշակումն իրականացվում է գրչաձողի օգնությամբ, որի երկրորդ ծայրը մտցվում է հենամահիկի հենարանային առանցքակալի վառնի մեջ: Մատուցումը, որպես կանոն, հաղորդվում է սեղանին երկայնակի ուղղությամբ: Պարուրակների մշակման դեպքում իլի մեկ պտույտի ընթացքում դրան հաղորդվում է համընթաց առանցքային տեղաշարժ՝ մշակվող պարուրակի քայլին հավասար: Ֆրեզերման դեպքում մատուցման շարժումը հաղորդվում է սեղանին լայնակի ուղղությամբ կամ իլի կոճղին՝ ուղղությաց ուղղությամբ:

Ճակատային մշակումների կամ ակոսների ներտաշման ժամանակ կտրման շարժումը հաղորդվում է շառավղային ենթակրով տափակակապիչին, իսկ նոր շառավղային ուղղությամբ տեղաշարժը մատուցումն է:


**Կառուցվածքային առանձնահատկությունները:** Հաստոցում կիրառված է արագությունների և մատուցումների տուփերի միարժնակ դեկավարում: Տեղակայված է հաստոցի աշխատանքային օրգանների արագ տեղաշարժի շարժաքեր: Հաստոցն ունի աշխատանքային օրգանների՝ ձեռքով ճշգրիտ տեղաշարժման հասուկ մեխանիզմ:

### **Հաստոցի կինեմատիկան**

**Կտրման շարժումները :** Հաստոցի իլը և տափակակապիչը շարժման մեջ են դրվում 6,5/7 կՎտ հզորությամբ Ծ1 երկարագանի էլեկտրաշարժիչի միջոցով 90 - 270 սեպափոկային փոխանցմանը և արագությունների տուփով (նկ. 3.8): Արագությունների տուփն ունի երկու եռարլոկ ատամնանիվներ՝ *B<sub>1</sub>* և *B<sub>2</sub>*, որոնք ապահովում են 9 փոխանցում, որն արդյունքում հնարավորություն է տալիս երկու արագություններ ունեցող էլեկտրաշարժիչի և  $\frac{43}{58}$  փոխանցման միջոցով իլին մեկ րոպեում փոխանցել

18 տարրեր պտուտաքվեր:

Իլի  $n_{\max}$  առավելագույն պտուտաքվերը մեկ րոպեում, հաշվի առնելով փոլի առաձգական սահքը, որոշվում են հետևյալ բանաձևով.



Чл. 3.8. 262Г діапазонів імпульсивного мікроскопічного гетеродінуального квантоваючого фільтрування відповідно до схеми

$$n_{\max} = 2890 \cdot \frac{90}{270} \cdot 0,985 \cdot \frac{28}{49} \cdot \frac{47}{30} \cdot \frac{55}{35} \cdot \frac{43}{58} = 1000 \text{ րոպե}^{-1}: \quad (3.7)$$

Տափակապիշի համար  $n_{\text{սան}}$  որոշվում է հետևյալ բանաձևով.

$$n_{\text{սան}} = 1440 \cdot \frac{90}{270} \cdot 0,985 \cdot \frac{20}{57} \cdot \frac{22}{55} \cdot \frac{19}{48} \cdot \frac{22}{58} = 10 \text{ րոպե}^{-1}: \quad (3.8)$$

**Մատուցման շարժումները :** Այս շարժումները վերցվում են IV լիսենից:

Պտույտները փոխանցվում են  $\frac{35}{56}$  անիվներով, VIII լիսեն,  $\frac{42}{42}$  անիվներ,

IX լիսեն,  $B_3$  բլոկ անիվներ, X լիսեն,  $B_4$  բլոկ անիվներ, XI լիսեն,  $B_5$  բլոկ անիվներ, XII սնամեջ լիսեն,  $B_6$  բլոկ անիվներ և XIV լիսեն: XIV լիսենից  $M_4$

կցորդիչի,  $\frac{39}{45}$  գլանական անիվների,  $\frac{21}{42}$  կոնական անիվների միջոցով

պտտական շարժման մեջ է դրվում XVI լիսենը:

Իի առանցքային մատուցումն իրականացվում է XVI լիսենից  $\frac{4}{29}$  որդ-

նակային փոխանցմամբ, XVII լիսեն,  $\frac{47}{47} \frac{47}{47}$  կոնական դարձիչ՝  $M_3$  կցորդի-

չով,  $\frac{33}{24}$  անիվներ, XVIII լիսեն,  $\frac{48}{33}$  անիվներ, XIX լիսեն,  $M_6$  կցորդիչ,  $\frac{50}{69}$

անիվներ և եռամուտք պտուտակ, որի մանելը տարիշով միացված է իին: Առանցքային առավելագույն  $s_{\text{իլ max}}$  մատուցման մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$s_{\text{իլ max}} = 1 \cdot \frac{58}{43} \cdot \frac{35}{56} \cdot \frac{42}{42} \cdot \frac{34}{34} \cdot \frac{34}{34} \cdot \frac{50}{18} \cdot \frac{50}{18} \cdot \frac{50}{42} \cdot \frac{39}{45} \cdot \frac{21}{42} \times \\ \times \frac{4}{29} \cdot \frac{33}{24} \cdot \frac{48}{33} \cdot \frac{50}{69} \times 3 \times 8 = 16 \text{ մմ/պտ} \quad (3.9)$$

Պարուրակի մշակման համար հաստոցը լարելիս  $M_6$  կցորդիչը հանվում է, իսկ XIX լիսենը միացվում XX լնիքացային պտուտակին՝ ճոճահանգույցի  $a, b, c$  և  $d$  անիվներով:

Իի կոճղի ուղղահայաց, ինչպես նաև սեղանի երկայնակի և լայնակի մատուցումներն իրականացվում են XVI ուղղահայաց լիսեռով, որից պտույտները  $\frac{19}{27}$  կոնական անիվների, XXV լիսենի,  $\frac{22}{44}$  անիվների, XXVI լիսենի

---

---

և  $M_4$  կցորդիչով կոնական  $\frac{36}{36} \frac{36}{36}$  դարձիչի միջոցով փոխանցվում են

XXVII լիսեռին: 36 անվի հետ բռնցքային  $M_5$  կցորդիչի միացման դեպքում

պտույտները  $\frac{36}{36}$  կոնական անիվներով, XXX լիսեռով,  $\frac{33}{29}$  անիվներով հա-

ղորդվում են XXXI լիսեռին: Վերջինս նույն արագությամբ շարժման է մղում իլի կոճղը և հետին կանգնակի հենամահիկը: Իլի կոճղը շարժում ստանում է

XXXI լիսեռից  $\frac{18}{48}$  կոնական անիվների և 8 մմ քայլով երկու մուտքանի

XXXII ընթացային պտուտակի միջոցով: Հենարանային հենամահիկին շարժումը հաղորդվում է XXXI լիսեռից  $\frac{22}{44}$  կոնական անիվների և 6 մմ

քայլով երկու մուտքանի XXXIV ընթացային պտուտակից:

Երկայնակի մատուցումը միացնելու համար  $M_5$  կցորդիչը կառչվում է 48 անվին, այդ դեպքում որդնակային  $\frac{2}{52}$  փոխանցումով ատամնաձողային

11 անիվը ստանում է պտուտական շարժում, որը կառչման մեջ է գտնվում հաստոցի սեղանին ամրացված շեղատամ ատամնաձողի հետ:

Լայնակի մատուցումը միացնելու համար  $M_5$  կցորդիչը տեղակայվում է չեզոք դիրքում, իսկ  $M_7$  կցորդիչը՝ միացվում է, որի հետևանքով XXVII լի լիսեռի միջոցով շարժման մեջ են դրվում  $\frac{33}{29}$  զույգ անիվները և 6 մմ քայլով լայնակի ընթացային պտուտակը:

Տափակակապիչի ենթակրի շառավղային մատուցումը վերցվում է տափակակապիչի V պարկուճից և իրականացվում դիֆերենցիալ մեխանիզմի միջոցով: Սի կողմից դիֆերենցիալի իրանը պտույտներ ստանում է անմիջապես V պարկուճից՝  $\frac{58}{22}$  անիվների միջոցով, մյուս կողմից՝ դիֆերենցիալի

20 աստղանիվը շարժման մեջ է դրվում V պարկուճից  $\frac{58}{22}$  անիվներով, բռնց-

քային  $M_1$  կցորդիչով, IV լիսեռ,  $\frac{35}{56}$  անիվներ, մատուցումների տուփ,

բռնցքային  $M_1$  կցորդիչով, IV լիսեռ,  $\frac{35}{56}$  անիվներ, մատուցումների տուփ,

---

---

XVI ուղարկայաց լիսեո,  $\frac{4}{29}$  որդնակային փոխանցում, XVII լիսեո, բռնցքա-

յին  $M_2$  կցորդիչ,  $\frac{57}{43}$  անիվներ և XXI լիսեո շղթայով: Դիֆերենցիալը, նշված երկու շարժումները գումարելով, պտույտները հաղորդում է XXII լիսեոյին, ապա  $\frac{24}{116} \frac{116}{22}$  անիվներով,  $\frac{1}{22}$  որդնակային և 16 ատամնաձողային փոխանցումներով՝ տափակակապիչի ենթակրին:

**Օժանդակ շարժումները:** Հաստոցի բոլոր օրգանների արագ տեղափոխությունը իրականացվում է առանձին, 2,8 կՎա հզորությամբ C2 էլեկտրաշարժիչից: Պտույտները էլեկտրաշարժիչից  $Mn_2$  ապահովիչ կցորդիչի և  $\frac{31}{58}$

$\frac{45}{51}$  անիվներով ռեդուկտորի միջոցով հաղորդվում են XXV լիսեոյին, ապա, նախկինում դիտարկված կինեմատիկ շղթայով՝ հաստոցի աշխատանքային օրգաններին:

Իլի կոճրի և հետին կանգնակի հենարանային հենամահիկի՝ ձեռքով տեղաշարժի համար նախատեսված է  $P_3$  բռնակը, որը տեղադրված է XXXIII լիսեոի ծայրին:

Երկայնակի ուղղությամբ սեղանի՝ ձեռքով տեղափոխությունն իրականացնում է  $P_4$  բռնակով, որը տեղադրված է XXIX լիսեոի վրա,  $M_5$  կցորդիչի չեզոք դիրքում գտնվելու պարագայում,  $\frac{42}{48}$  անիվների,  $\frac{2}{52}$  որդնակային

փոխանցման և թեքատամ ատամնաձողային փոխանցման միջոցով:

Հետին կանգնակը երկայնակի ուղղությամբ տեղափոխվում է  $P_6$  բռնակով, որը տեղադրված է XXXV լիսեոի վրա,  $\frac{11}{34}$  պտուտակային անիվների,

XXXVI լիսեոի և ատամնաձողային փոխանցման միջոցով:

Հենակային հենամահիկի ճշգրիտ տեղակայումն ապահովելու համար իրա խիստ համառանցքայնությունը իլի հետ իրականացվում է  $M_x$  դարձանակի և  $\frac{1}{44}$  որդնակային փոխանցման միջոցով:

---

### **3.3. Իմքնասոուզման հարցաշար**

1. Նշել գայլիկոնման հաստոցների տեսակները, օգտագործման բնագավառը:
2. Նշել 2A135 մակնիշի ուղղաձիգ գայլիկոնման հաստոցի հիմնական հանգույցները և դեկավարման օրգանները:
3. Նշել գլխավոր շարժման կինեմատիկ շղթան: Ինչպես են որոշվում իլի ամենամեծ և ամենափոքր պտուտաքվերը՝  $n_{\max}$ -ը և  $n_{\min}$ -ը:
4. Նշել իլի մատուցման շարժման կինեմատիկ շղթան:
5. Ի՞նչ կարող գործիքներ են օգտագործվում ուղղաձիգ գայլիկոնման հաստոցի վրա:
6. Ինչպիսի համապիտանի և հատուկ հարմարանքներ են օգտագործվում 2A135 ուղղաձիգ գայլիկոնման հաստոցի վրա:
7. Նշել 2B56 մակնիշի շառավղայինգայլիկոնման հաստոցի հիմնական հանգույցները և դեկավարման օրգանները:
8. Ի՞նչ առավելություններ ունի շառավղային գայլիկոնման հաստոցը:
9. Նշել 2B56 մակնիշի շառավղային գայլիկոնման հաստոցի գլխավոր շարժման կինեմատիկ շղթան: Ինչպես են որոշվում իլի ամենամեծ և ամենափոքր պտուտաքվերը՝  $n_{\max}$ -ը և  $n_{\min}$ -ը:
10. Նշել 2B56 մակնիշի շառավղային գայլիկոնման հաստոցի իլի մատուցման շարժման կինեմատիկ շղթան:
11. Նշել 2B56 մակնիշի հաստոցի օժանդակ շարժումների կինեմատիկ շղթան:
12. Ինչպես են իրագործվում 2B56 մակնիշի հաստոցի լայնակի (տրավերսի) ուղղաձիգ տեղափոխությունը և ձգումը:
13. Նշել ներտաշման հաստոցների տեսակները, օգտագործման բնագավառը:
14. 262Г մակնիշի հորիզոնական ներտաշման հաստոցի հիմնական հանգույցները և դեկավարման օրգանները:
15. Նշել գլխավոր շարժման կինեմատիկ շղթան: Ինչպես են որոշվում իլի ամենամեծ և ամենափոքր պտուտաքվերը՝  $n_{\max}$ -ը և  $n_{\min}$ -ը:
16. Նշել իլի առանցքային մատուցման և օժանդակ շարժումների կինեմատիկ շղթաները: